

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2016թ. երկրորդ կիսամյակի կատարած աշխատանքների:

2-րդ կիսամյակում հրավիրվել է ավագանու 7 նիստ, Առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2016թ բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 9 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 395000 դրամ:

Համայնքի առևտրի օբյեկտների նկատմամբ պարբերաբար հսկողություն է իրականացվում:

Հաստատվել է Փշատավան համայնքի քաղաքաշինության կանոնադրությունը :

Երկրորդ նիստով փոփոխություն է կատարվել 2016թ բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 8 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 600000 դրամ:

Տրվել է թույլտվություն Փշատավան համայնքի բնակիչ Ազնիվ Մնացականյանի տանը հարակից բարդու ծառի ծառահատման թույլտվությունն միջամտություն է կատարվել ՀՀ Արմավիրի մարզի Արտակարգ իրավիճակների ստորաբաժանմանը իրենց տեխնիկայի միջոցով կատարել ծառահատումը:

2016 թվականի հունիս 22-ից մինչև 2016 թվականի հուլիսի Փշատավան համայնքում իրականացվել է Վարչական ստուգումներ որից հետո ըստ կայացրած ակտի վերացվել են հայտնաբերած բոլոր թերությունները:

8-րդ նիստով դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 5 սոցիալապես բնակիչներին ընդհանուր առմամբ տրամադրվել է 360000 դրամ :

Նույն նիստով փոփոխություն է կատարվել Փշատավան համայնքի 2016 թվականի բյուջեում:

Փշատավան համայնքի միջնակարգ դպրոցի ՊՈԱԿ-ի կողեցիալ կառավարման խորհրդի կազմում հաստատվել է Հերմինե Հակոբյանի թեկնածությունը:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 7 որոշում, 1 կարգադրություն

Համայնքի ավագանին համաձայնություն է հայտնել համայնքի խմելու ջրի պոմպի հրատապ անհետաձգելի վերանորոգման համար:

9-րդ նիստով փոփոխություն է կատարվել 2016թ քյուջեում: Փշատավան համայնքի սոցիալապես անապահով 5 ընտանիքների տրամադրվել է 132000 դրամ դրամական օգնություն: Հաստատվել է Փշատավան համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը :

2016 թվականի սեպտեմբերի 18-ին Փշատավան համայնքում տեղի ունեցավ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, ընտրվեց Փշատավան համայնքի ավագանին:

10-րդ նիստով 2016 թվականի նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ նորընտիր ավագանու Անդրանիկ նիստը, որում հաստատվեց նրանց լիազորությունները և ընդունվել ավագանու Կանոնակարգի մասին որոշում:

30.09.2016թ կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհները՝ կուլտուրայի տան և հարակից այգու տարածքը կուտակված աղբից:

Խմելու ջրի ջրագիծը բավականին հին է, որի պատճառով անխուսափելի են ջրագծի վթարները : Բավականին աշխատանք է տարվել որպեսզի ձմռանը ինչքան հնարավոր է քիչ լինեն նմանատիպ վթարներ:

Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա ընթացքում 4 ժամյա գրաֆիկով:

11-րդ նիստով հաստատվել է Փշատավան համայնքի համայնքային ծառայողների մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի ավագանու անդամների անհատական և քանակական կազմը:

աշխատակազմի անդամները և
Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 8
սոցիալապես անապահով ընտանիքների ընդհանուր
առմամբ 600000 դրամ:

Համայնքի գյուղամիջյան ճանապարհների մեծ մասը
անանցանելի են, այս վիճակը մեղմացնելու համար հարթվել
և ավագ է լցվել այդ ճանապարհների վրա Փշատավան-
Ջանֆիդա ասֆալտապատ ճանապարհը վերանորոգման
կարիզ ուներ, որի պատճառով համայնքի միջոցներով
վերանորոգվել է:

01.12.2016թ. համայնքում իրականացվել է շաբաթօրյակ,
որի արդյունքում աղբից մաքրվել է Արգավանդ-
Փշատավան ճանապարհահատվածի հարակից տարածքը
կուտակված աղբից:նոյեմբերի 3-10 ը կազմակերպվել է
շաբաթօրյակ, որի ընթացքում մաքրվել է գյուղամիջյան
այգու տարածքը, կատարվել է ծառերի
սանիտարական հատումներ:

Ախտահանվել է խմելու ջրի հորը քլորամինով:

Փշատավան համայնքի միջնակարգ դպրոցին Ամանորի
գյուղապետարանը նվիրներ է առաջինից չորրորդ
դասարանի աշակերտներին :

Հսկայական աշխատանք է տարվել գարնանը
ցրտահարությունից և հարկտահարությունից տուժած
տնային տնտեսությունների վնասները հաշվառման և
գնահատման առումով, հաշվարկած և գնահատված
տվյալները ուղարկվել է Արմավիրի մարզպետարան:

Գյուղապետարանը հսկայական աշխատանք է կատարել
խաղողի բերքահավաքի լիարժեք կազմակերպման
համար.

Գյուղում կան հողեր որոնք գտնվում են սահմանային գոտում , գյուղապետարանը կազմակերպել է անցագրերի տրամադրում , որպեսզի ծիրանի բերքահավաքը պատշաճ մակարդակով կատարվի, որի արդյունքում մեծ քանակությամբ խաղող է արտահանվել է գյուղից:

2016 թվականի 1-իկ կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 55 որոշում, 6 կարգադրություն: Համայնքի բնակիչներին իրենց դիմումներին ի պատասխան տրամադրվել է 380 տեղեկանքներ:

2016թվականի 2-րդ կիսամյակի հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը հետևյալն է՝

2-րդ կիսամյակ	հողի հարկ	3118.8հազ. դրամ
	գույքահարկ	1442.7հազ դրամ
	հողի վարձավճար	23.5 դրամ
	տեղական տուրք	47.8հազ. դրամ
	Խմելու ջրի վարձ.	476.0հազ. դրամ

Փշատավան համայնքի հիմնախնդիրներ՝

1. Փշատավան համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում:
2. Փշատավան Արգավանդ ճանապարհի կապիտալ նորոգում:
4. Համայնքի լիարժեք գազաֆիկացում:

Համայնքի ղեկավար

 Երամյան